ՄԱՅՐԵՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐԵՆԻ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ–ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար

Երևան – 2026

ՀՏԴ
ԳՄԴ

«Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետր / Միքայելյան Ա. Վ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2026. - 78 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ. Ա.

Հեղինակներ՝
Միքայելյան Արմինե Վալերիի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Նկարազարդում և համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Մայրենի» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

Նախաբան

«Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետրը հասցեագրված է 3–րդ դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, նրանց ուսուցիչներին, ծնողներին և նպատակաուղղված է ընթերցանության դժվարությունները հետաքրքրաշարժ ու հարմարեցված առաջադրանքների կատարման միջոցով հաղթահարելուն:

Նշենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների հիմնական ուղղվածությունը ուսուցման գործընթացում դժվարություններ ունեցող երեխաների ոչ միայն ընթերցողական կարողության ձևավորումն է, որը 2–րդ դասարանում արդեն որոշակիորեն հաղթահարված է, այլև ուշադրություն է դարձվում կապակցված բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը միտված վարժությունների իրականացմանը: Այս շրջանում ևս կարևորում ենք սովորողների վերլուծահամադրական մտածողությունը, դիտողականությունը, բարձրագույն հոգեկան գործընթացները զարգացնելու հարցը:

«Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների իրականացման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները կկարողանան.

- կազմել և ընթերցել տարբեր կառուցվածք ունեցող տեքստեր՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները:
- Պատասխանել բնագրի և դրան կից նկարազարդումների վերաբերյալ առաջադրված հարցերին, օրինակ, բնագրում գտնել առաջադրվող հարցի պատասխան–նախադասությունը և կարդալ, տարրական գնահատական տալ կարդացածին և այլն:

Նշենք նաև, որ մշակված առաջադրանքների խոսքային նյութը 3–րդ դասարանի մայրենիի գործող դասագրքերի բնագրերից ընտրված հատվածներ են, բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ:

Ներկայացված առաջադրանքները հետաքրքրաշատ են, ունեն խաղային բնույթ: Խոսքային հրահանգները ձևակերպված են պարզ ու մատչելի, տառաչափը՝ 14, կիրառված են գլոբալ ընթերցանության տարրեր, առկա են վանկային կորեր, պահպանված է միջառարկայական կապերի ապահովման դիդակտիկական սկզբունքը: Մենք համոզմունք ունենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կնպաստեն նաև սովորողների ինքնուրույնության, ստեղծարարության զարգացմանը՝ որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով:

1. Գծիկների վրա գրիր համապատասխան փոքրատառերը:

Ա ա	Թթ	Ձ __	Չ չ	Ց ց
Բ __	Ժ ժ	Ղ ղ	Պ պ	Ու __
Գ գ	Ի ի	Ճ ճ	Ջ ջ	Փ __
Դ __	Լ լ	Մ մ	Ռ __	Ք ք
Ե ե	Խ __	Յ __	Ս ս	Եվ __
Զ զ	Ծ __	Ն ն	Վ __	Օ օ
Է __	Կ __	Շ __	Տ տ	Ֆ __
Ը ը	Հ հ	Ո ո	Ր __	

2. Ասա այբուբենը: Գրիր բոլոր ձայնավոր հնչյունների տառերը կարմիր տնակում:

3. Մարդկանց անունները արտագրիր/դասավորիր այբբենական կարգով (տես Հավելված 1):

Անահիտ, Դավիթ, Բաբկեն, Գայանե, Զավեն, Ժիրայր

Ա _____ Զ _____

Բ _____ Է _____

Գ _____ Ը _____

Դ _____ Թ _____

Ե _____ Ժ _____

4. Արտագրիր բառերը այբբենական կարգով:

գնդակ, արջուկ, պարան, տիկնիկ, դանակ, մեքենա, թիթեռ, խնձոր, նուռ

արջուկ,

5. Հաշվիր տառերի քանակը տրված բառերում: Գրիր՝ ինչպես տրված է օրինակում:

թերթ 4, անուն ___, լուռ ___, համեստ ___, պահարան ___,

վերնագիր ___, թևեր ___, բարձունք ___, աշխարհ ___

6. Կարդա՛ քառատողը: Ընդգծիր 2 անգամ գործածված բառը:

Թեև անձրև է մաղում,
Բայց մենք ֆուտբոլ ենք խաղում,
Ուրախ ճչում ենք վազում,
Եվ անձրևն է նվազում:

7. Կարդա՛ հանելուկը: Տրված բառերի շարքում կանաչով ընդգծիր պատասխան–բառը:

Ջրում արագ լողում է,
Արագիլից դողում է,
Ցատկոտում է ցամաքում,
Բայց ջրում է նա երգում:

ձուկ, գորտ, գետաձի, ճնճղուկ

8. Արտագրիր ձայնավորով սկսվող բառերը ձախ սյունակում, բաղաձայնով սկսվողները՝ աջ սյունակում:

դպրոց, մայրիկ, հայրիկ, ձուկ, ուտելիք, ճագուկ, աշխատանք, գորտ, ուսուցիչ, տատիկ, անձրև, խլուրդ, արև, օրացույց

բաղաձայնով սկսվող	ձայնավորով սկսվող
դպրոց	ուտելիք

9. ա) Անվանիր պատկերված առարկաները: Սլաքներով միացրու բառերը համապատասխան նկարներին:

գիրք

տերև

օրացույց

թիթեռ

անձրև

ծաղիկ

բ) Արտագրիր ձայնավորով սկսվող բառերը:

10. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 3 տառից կազմված բառերը:

Թեև արև է շողում,
Բայց մենք փորում ենք, խաղում,
Հողի տակ ենք վազվզում,
Ոչ մի արև չենք ուզում:

11. Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր տոների անվանումները:

Մարտի 8–ը կանանց միջազգային օրն է:
Հայաստանի Անկախության օրը նշում ենք սեպտեմբերի 21–ին:
Վարդավառը երեխաների սիրած տոնն է:
Ամանորը բոլորի սիրած տոնն է:
Ուսուցչի տոնը նշում ենք հոկտեմբերի 5–ին:

12. Լրացրո՛ւ տարվա եղանակը:

Մարտի 8–ը նշում ենք գարնանը:

Նոր տարին նշում ենք _____:

Վարդավառը նշում ենք _____:

Սուրբ Զատիկը նշում ենք _____:

Ուսուցչի օրը նշում ենք _____:

Իմ ծննդյան օրը նշում ենք _____:

13. Կարդա՛ բառերը: Կանաչով ընդգծի՛ր դրանցում կրկնվող արմատը:

աշնանաբույր, արևաբույր, գարնանաբույր, անուշաբույր, մեղրաբույր

14. Արտագրիր՝ լրացնելով համապատասխան բառը:

Նախադասությունը կազմված է _____:

Նախադասությունն սկսվում է _____:

Նախադասության վերջում դնում ենք _____:

մեծատառով վերջակետ բառերից

15. Կազմի՛ր բառեր տրված օրինակով և գրի՛ր:

արև + ուտ = արևուտ

արև + ելք = _____

արև + մուտք = _____

արև + ային = _____

արև + ա + ծաղիկ = _____

արև + ա + բույր = _____

արև + ա + փայլ = _____

արև + ա + համ = _____

16. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր նախադասությունների առաջին բառերը:

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

Մի օր թագավորը որսի էր գնում: Տեսավ, որ ծերունին ընկուզենի է տնկում առվի ափին: Թագավորը ողջունեց ծերունուն ու հարցրեց.

– Բարի՛ հայրիկ, ի՞նչն է քեզ ստիպում այդպես չարչարվել: Չէ՞ որ ընկուզենին շատ ուշ է պտուղներ տալիս, և դու դժվար թե պտուղները վայելես:

– Տե՛ր արքա,– ասաց ծերունին,– մեր պապերը ծառեր են տնկել,

որոնց պտուղը մենք վայելում ենք, մենք էլ նույնը պիտի անենք մեր զավակների ու թոռների համար:

– Կեցցե՛ս, իմաստո՛ւն ծերուկ,– ասաց թագավորը և ծառային հրամայեց, որ ծերունուն նվիրի տասը ոսկի: Ծերունին ոսկիները վերցրեց, շնորհակալություն հայտնեց թագավորին:

բ) Տեքստից արտագրի՛ր հարցի պատասխանը:

-Ո՞վ էր գնում որսի: _____

-Ի՞նչ տվեց թագավորը ծերունուն: _____

-Ի՞նչ ասաց ծերունին թագավորին: _____

17. Միավորի՛ր արմատները և գրի՛ր ստացված բառերը:

սեղան	+	ատամ	=	սեղանատամ
հաց	+	ման	=	_____
խաչ	+	քար	=	_____
աղ	+	ման	=	_____

18. Կարդա՛ բանաստեղծության տրված հատվածը: Տնակի մեջ արտագրի՛ր մեկ ձայնավոր ունեցող բառերը:

Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ,
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր
Հայրենի՛ իմ հող:

19. Բառերը գծով միացրո՛ւ համապատասխան նկարներին:

թութակ
վանդակ
ճյուղ
երկինք
տուն
անտառ
անձրև
աչք
թև

20. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր մինչև երրորդ նախադասությունը:

ԹՈՒԹԱԿԸ

Մի նավաստի բռնում է մի գեղեցիկ թութակ, դնում վանդակի մեջ ու տուն բերում: Նավաստին շատ էր սիրում թութակին: Նրան ուտելիք էր տալիս, խնամում էր, գուրգուրում ու փայփայում, խոսում նրա հետ: Սակայն թութակը շատ էր տխուր, անընդհատ փորձում էր ազատվել վանդակից: Այդպես անցնում են օրեր....

_____

_____

_____

բ) Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

Թութակը ուրախ էր: ☐ Թութակը տխուր էր: ☐

21. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Գրի՛ր պատասխան-բառը:

Ո՞ր թռչունն է գույնզգույն,
Որ մեզ կրկնում է իսկույն:

_____

22. Կարդա՛ «Հայրենի իմ հող» բանաստեղծությունից մի հատված: Հաշվի՛ր և գրի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել ***սիրտ*** բառը:

Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ,
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր
Հայրենի՛ իմ հող:

☐

23. Գրի՛ր ստացված բառը և կարդա՛:

տղա + մարդ = _____

հող + ա + գործ = _____

հյուր + ա + սրահ = _____

ծառ + ա + տունկ = _____

գետ + ա + ձի = _____

24. Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Բառերում ընդգծի՛ր իրար կողքի **2** բաղաձայնները:

Ես արդեն կարծես գիտեմ ամեն ինչ,
Դարձել եմ հզոր մի համակարգիչ,
Կարող եմ փնտրել, ինչ ասես գտնել,
Աշխարհով ման գալ, ամեն տեղ մտնել:

25. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի **4** բաղաձայն ունեցող բառը:

Այնպես քնքուշ, այնպես զվարթ
Ժպտում ես դու, մե՛ր Երևան,
Երկինքդ պարզ, արևն առատ,
Քո ջուրն անուշ ու գլգլան:

26. Կանաչով ընդգծի՛ր այն բառերը, որոնք բնութագրում են Երևանը:

չար, հնագույն, հյուրասեր, վարդագույն, փայտաշեն, ջերմ, սրտաբաց, դառը, գեղեցիկ

27. Առանձնացրո՛ւ արմատն ու ածանցը՝ ըստ օրինակի:

	արմատ	ածանց
բակային	բակ	ային
հեռավոր		
խաղային		
անշարժ		
քաղաքային		
անհամբեր		
գյուղական		
դասարան		

28. Արմատներով և վերջածանցներով կազմի՛ր բառեր և գրի՛ր:

արջ + ուկ = արջուկ

ձագ + ուկ = _____

խոզ + ուկ = _____

ուլ + իկ = _____

դաս + արան = _____

բառ + արան = _____

հյուր + անոց = _____

չոր + անոց = _____

29. Նախածանցներով և արմատներով կազմի՛ր բառեր և գրի՛ր:

ան + տուն = _____

ան + վարժ = _____

ան + օգուտ = _____

չ + տես = _____

դժ + գոհ = _____

դժ + բախտ = _____

ան + գին = _____

ան + ձայն = _____

30. Ըստ թվերի հերթականության արտագրի՛ր/փակցրու նախադասությունները և կարդա՛ նամակը (տես Հավելված 2):

7. Դեկտեմբերի 20–ը 2026թ.

2. Քեզ շատ–շատ եմ կարոտել:

4. Անհամբեր սպասում եմ քո գալուն:

3. Մենք արդեն տոնածառը զարդարել ենք:

5. Շուտ արի, որ գնանք Ամանորի հանդեսին:

1. Բարև, տատի՛կ ջան:

6. Քո թոռնիկ՝ Անահիտ:



ՆԱՄԱԿ

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

7. _____

31. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Կարմիրով ընդգծի՛ր ***Նոր տարի*** բառակապակցությունը:

Հերիք սպասենք,
Նոր տարի, արի՛,
Իրականացրու՛
Իղձերը բարի:
Արի՛, Նոր տարի,
Ու բե՛ր մեզ համար
Արևոտ ձմեռ
Ու ձյունոտ ամառ:

բ) Քանի՞ անգամ է գործածվել ***Նոր տարի*** բառակապակցությունը, գրի՛ր թիվը վանդակում:

32. Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր երեխաների անունները. այսպես էին անվանում Հովհաննես Թումանյանի 8 երեխաներին:

Մուշիկ, Նուշիկ, Անուշիկ,

Արտիկ, Համլիկ, Արտուշիկ,

Աշխեն, Արեգ, շո՛ւտ արեք,

Տոնածառը զարդարե՛ք:

_____

_____

33. Լրացրո՛ւ բառի պակասող վանկը և ստացի՛ր մարդկանց անուններ:

Աշ _____

Տիգ _____

Շու _____

Սու _____

Նու _____

Ա _____



34. ա) Կարդա՛ նախադասությունները: Հաշվի՛ր և գրի՛ր նախադասության բառերի քանակը քառակուսու մեջ:

Նոր տարին հայերի սիրելի տոներից է: ☐

Այն ընտանիքի բոլոր անդամներին հավաքում է մեկ հարկի տակ: ☐

Հայերը տոնածառը զարդարում էին չրերով, կոնֆետներով, գաթաներով ու մրգերով: ☐

Ամանորին հաջորդում է Սուրբ ծնունդը՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնը: ☐

բ) Գրի՛ր հարցերի պատասխանները:

– Ո՞ւմ սիրելի տոնն է Նոր տարին:

_____

– Որտե՞ղ են հավաքվում ընտանիքի բոլոր անդամները:

_____

– Ինչո՞վ էին զարդարում տոնածառը հայերը:

_____

35. Արտագրի՛ր մրգերի անվանումները տոնածառի խաղալիքների մեջ՝ յուրաքանչյուր մրգի գույնով:

խնձոր, բանան, նուռ, դեղձ, ծիրան, սալոր, խաղող, տանձ, թուզ



36. Արտագրիր ածանցավոր բառերը ճիշտ տեղերում:

արևոտ, փոքրիկ, անսովոր, ձյունոտ, անպատճառ, լճակ, անկարգ, երգիչ, թերթիկ, անուշադիր, դժգոհ, ճագուկ, չտես, տոնական, անձայն, անպետք

նախածանցավոր	վերջածանցավոր

37. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգիր 4 բառ ունեցող նախադասությունները:

Ճնճղուկն արդեն կարողանում էր թռչել: Նա նստում էր մանկապարտեզի պատուհանագոգին: Այնտեղ շատ երեխաներ կային: Նրանք երգում էին, պարում, հետո նստում էին նախաճաշելու: Նախաճաշից հետո հացի փշրանքները երեխաները լցնում էին պատուհանագոգին: Ճնճղուկը ուտում էր դրանք: Նա շատ գոհ էր:

բ) Հարցերի պատասխաններն արտագրիր տեքստից:

– Որտեղ էր նստում ճնճղուկը:

_____

– Ի՞նչ էին անում երեխաները մանկապարտեզում:

_____

– Երեխաները որտեղ էին լցնում հացի փշրանքները:

_____

38. ա) Կարդա՛ և կռահի՛ր հանելուկի պատասխանը:

Իմ ճամփան անվերջ
Երգով է գնում:
Ամբողջ տարվա մեջ
Ձմռանն է քնում:

_____

բ) Պատասխան–բառում ընդգծի՛ր ածանցը:

39. Կարդա՛ տրված նախադասությունների ընդգծված բառերը:

1. Անտառում ապրող փշոտ ոզնին վախենում է ջրից:
2. Չվող թռչունները վերադարձան տաք երկրներից:
3. Առավոտից աղջիկը հիանում էր արևով:

40. Գրի՛ր հարցերը՝ ըստ օրինակի:

քաղաք - ինչ	գյուղացի - ո՞վ
այգի - _____	ոսկի - _____
փողոց - _____	տղա - _____
թագավոր - _____	փոս - _____

41. Գրի՛ր հարցերը՝ ըստ օրինակի:

քաղաքներ - ինչե՞ր	բժիշկներ - ովքե՞ր
ծաղիկներ - _____	ամպեր - _____
աղջիկներ - _____	ընկերներ - _____
պայուսակներ - _____	խնձորներ - _____
ծնողներ - _____	տերևներ - _____

42. Արտագրիր բառերը համապատասխան սյունակներում:

գյուղացիներ, արտ, կարաս, մարդ, լույս, ջուր, ոսկի, մթերք, աղջիկներ, աղբյուր, կին, հանելուկ, մազեր, մորուք, մայրիկներ

ինչ, ինչեր	ով, ովքեր
արտ	գյուղացիներ

43. ա) Կարդա՛ պատմությունը: Ընդգծիր ոսկի բառը և հաշվիր՝ քանի՞ անգամ է գործածվել այն: Գրիր թիվը քառակուսու մեջ:

Գյուղացին մի կարաս ոսկի գտավ, շատ ուրախացավ: Մտքում ասաց. «Ում որ առաջինը տեսնեմ, ոսկու կեսը նրան կտամ»:

Այդ պահին թագավորի ծառան անցնում էր արտի մոտով: Գյուղացին նրան առաջարկեց ոսկու կեսը: Ծառան ասաց.

– Մեր թագավորության մեջ ես գտել

կարաս

ոսկին, ուրեմն մերն է:

Եվ ամբողջ ոսկին վերցնելով՝ հեռացավ: Գյուղացին տխուր եկավ տուն և ամեն ինչ պատմեց:

բ) Պատասխանի՛ր հարցերին 1 բառով:

– Ի՞նչ գտավ գյուղացին: _____

– Ինչի՞ մոտով էր անցնում ծառան: _____

– Գյուղացին ինչպե՞ս եկավ տուն: _____

44. Արտագրի՛ր գործողություն ցույց տվող բառերը ճիշտ տեղերում:

Պարուհին (ի՞նչ է անում) _____ լողում է:

Ձյունը (ի՞նչ է լինում) _____ թափվում են:

Օձը (ի՞նչ է անում) _____ պարում է:

Ձուկը (ի՞նչ է անում) _____ հալվում է:

Տերևները (ի՞նչ են լինում) _____ հասնում է:

Խաղողը (ի՞նչ է լինում) _____ սողում է:

45. Գունավորի՛ր այն շրջանները, որոնց կից գրված բառերը ցույց են տալիս մեկ առարկայի գործողություն:

◯ հրամայում է ◯ շողում է

◯ խաղում են ◯ սիրում է

◯ տխրում են ◯ օգնում է

46. Կարդա՛ հանելուկը: Ընդգծի՛ր գործողություն ցույց տվող բառերը:

Թռչում է, հավ չի,
Լողում է, նավ չի,
Երգում է այն ժամին,
Երբ մոտ է իր մահին:



_____

47. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր տոնի անվանումը:

Վարդավառ էր.
Ով դուրս եկավ, ջրեցի:
Չնայեցի փոքր ու մեծ.
Վերից վար ջուր արեցի:

48. Լրացրո՛ւ գործողություն ցույց տվող բառերը:

խաղում են, կչորանան, ջրում են, երգում են, փայլում է

Ծառերը առանց ջրի _____:

Վարդավառի ժամանակ բոլորը միմյանց _____:

Տոնի ժամանակ բոլորը _____:

Արևը _____ երկնքում:

Երեխաները _____ բակում:

49. Շարունակի՛ր շարքը՝ ըստ օրինակի:

ջուր անել - ջրել
խաղ անել - _____
կար անել - _____
գիր անել - _____
վար անել - _____
աղոթք անել - _____

50. ա) Կարդա՛ տոների վերաբերյալ նախադասությունները: Լրացրո՛ւ անավարտ նախադասությունը:

Ամանորին մեզ հյուր է գալիս Ձմեռ պապիկը:

Վարդավառի տոնին իրար վրա ջուր ենք լցնում:

Մայրիկների տոնը նշում ենք ապրիլի 7–ին:

Անկախության տոնը նշում ենք սեպտեմբերի 21–ին:

Իմ ծննդյան տոնը նշում ենք _____:

բ) Ե՞րբ ենք նշում Անկախության տոնը: Արտագրի՛ր պատասխան–նախադասությունը:

_____

51. Կարդա՛ քառատողը: Կարմիրով ընդգծի՛ր **ճ** տառը, կանաչով՝ **չ** տառը:

Սուտ խոսելը լավ բան չէ,
Եթե սուտը կատակ չէ:
Ճիշտը պետք է ճանաչել,
Ճիշտ խոսել ու չամաչել:

52. ա) Կարդա՛ առակը: Ընդգծի՛ր **ցախավել** բառը:

Առակ

Մի ծերունի ուներ երեք որդի: Որդիները հաշտ չէին:

Մի անգամ նա որդիներին կանչեց իր մոտ: Ավագ որդուն տվեց մի ցախավել ու ասաց, որ կոտրի: Ավագ որդին, որքան էլ չարչարվեց, չկարողացավ կոտրել ցախավելը: Մյուս որդիներն էլ չկարողացան կոտրել: Հայրը քանդեց ցախավելի կապերը, ճյուղերն առանձնացրեց իրարից և որդիներին ասաց.

– Դե հիմա՛ կոտրեք ցախավելը: Որդիները

հեշտությամբ կարողացան կոտրել ցախավելի ճյուղերը:

Հայրը, նայելով որդիներին, ասաց.

– Կյանքում էլ է այդպես: Եթե դուք միասին լինեք, ոչ ոք չի կարող հաղթել ձեզ:

բ) Արտագրիր առակի վերջաբանը և ասա՝ ինչ հասկացար:

_____

_____

53. Տրված բառերի կողքին արտագրիր հակառակ իմաստ ունեցողները:

փոքր – _____

քչանալ – _____

ճիշտ – _____

թաց – _____

մոռանալ – _____

կորցնել – _____

մոտիկ – _____

հիշել, մեծ, գտնել, հեռու, ավելանալ, չոր, սուտ

54. Կարդա՛ տեքստը: Արտագրիր մայրիկի խոսքը:

Փոքրիկը բալ է ուտում, կորիզը գցում գետնին:

– Աղջի՛կ ջան, կորիզները չի կարելի գետնին գցել:

– Մա՛մ, բա ինչ անեմ:

_____

55. Արտագրի՛ր հոմանիշները ճիշտ տեղերում:

մեծ, ճամփա, երգ, սիրուն, կրտսեր

գեղեցիկ _____

ավագ _____

ճանապարհ _____

փոքր _____

տաղ _____

56. ա) Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր կենդանիների անվանումները:

Շուտ արթնացե՛ք, դա՛շտ ու անտա՛ռ,
Արթնացե՛ք գա՛յլ ու նապաստա՛կ,
Ժամը վեցն է, բացվեց օրը,
Եվ ուրախ են շուրջբոլորը:

_____, _____

բ) Ժամը քանիսի՞ն բացվեց օրը:

Օրը բացվեց ժամը _____:

57. Կարդա՛ քառատողը: Կապույտով ընդգծի՛ր թիվ ցույց տվող բառը:

Սկյուռները ժամը յոթին
Միացել են, դարձել մի թիմ,
Եվ թռչում են, և՛ ցատկոտում,
Մարզանք անում մաքուր օդում:

58. Կարդա՛ հանելուկը: Կռահի՛ր և գրի՛ր պատասխան–բառը:

Աշխատում է օրնիբուն
Մի գեղեցիկ մեքենա,
Ով որ նրան չնայի,
Ամեն բանից կուշանա:

_____

59. Կարդա՛ քառատողը: Կապույտով ընդգծի՛ր թիվ ցույց տվող բառը:

Մեծ սլաքը ժամացույցի
Մի մեծ պտույտ, տե՛ս, կատարեց,
Նապաստակը ժամը ութին
Նախաճաշիկ շուտ պատվիրեց:

60. ա) Կարդա՛ քառատողը: Ընդգծված բառերը համեմատի՛ր իրար հետ. ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր:

Արեգակն է ձեռքով անում,
Դաշտ ու անտառ քնից հանում,
Որ չուշանաս ոչ մի բանից,
Արևի հետ ելիր տնից:

բ) Գրի՛ր, թե ժամը քանիսի՞ն ես արթնանում:

_____

61. Կարդա՛ պատմությունը: Հաշվի՛ր՝ քանի՞ հերոս ունի այն: Արտագրի՛ր նրանց անունները:

ԱԶՆԻՎ ԶԻՆՎՈՐԸ

Երեխաները բակում խաղում էին: Նրանց մեջ էր նաև փոքրիկ Շահենը: Հանկարծ Շահենի մայրիկը տեսավ, որ նա թիկունքին առած տանում էր Հայկին: Շահենի մայրիկը բարկացած հարցրեց որդուն.

– Ինչո՞ւ ես տանում քեզնից մեծ ընկերոջդ:

– Մայրի՛կ, կռիվ-կռիվ ենք խաղում, իսկ ես վիրավոր զինվորին էի տեղափոխում,– պատասխանեց Շահենը:

Շահենի մայրիկը հուզված ժպտաց:

---

62. ա) Արտագրի՛ր նախադասությունները՝ գծերի վրա գրելով/փակցնելով անհրաժեշտ բառը (տե՛ս Հավելված 3):

Եթե տղան մեծ է աղջկանից, ուրեմն աղջիկը _____ *(փոքր է, մեծ է)* տղայից:

Եթե սեղանը բարձր է աթոռից, ուրեմն աթոռը _____ *(ցածր է, բարձր է)* սեղանից:

Եթե ծառի բունը հաստ է ճյուղից, ապա ճյուղը _____ *(հաստ է, բարակ է)* ծառի բնից:

Եթե օձը երկար է որդից, ապա որդը _____ *(երկար է, կարճ է)* օձից:

բ) Դուրս գրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը՝ ըստ օրինակի:

փոքր	մեծ

63. ա) Կարդա՛ տեքստը:

Հայ ժողովուրդը աշխարհի այն հնագույն ժողովուրդներից է, որ միշտ կառուցել է, ստեղծել: Նրա հարուստ մշակութը, հին վանքերը հայտնի են աշխարհին:

Հայ ժողովուրդը ունի այնպիսի գծեր, ինչպիսիք են **բարությունը, ազնվությունը, հպարտությունը:** Նա կա ու շարունակելու է ապրել:

բ) Արտագրի՛ր հայ ժողովրդին բնորոշող բառերը:

64. ա) Կարդա՛ պատմությունը:
Արտագրի՛ր հերոսների անունները:

Հայկ Նահապետը տեսնում է, որ հողը թույլ ու վնասված է: Նա իր որդի Արային հանձնարարում է, որ ծառ ու թուփ տնկի. միայն այդ դեպքում հողը կամրանա ու չի հոսի:

բ) Հարցի պատասխանն արտագրիր պատմությունից;

– Ո՞ր դեպքում հողը կամրանա ու չի հոսի:

---

65. Կարդա՛ նախադասությունները:

- ○ Խոսում եմ գրական հայերենով:
- ○ Փակում եմ ջրի ծորակը, երբ վերջացնում եմ լվացվելը:
- ○ Աղբը միշտ գցում եմ աղբամանի մեջ:
- ○ Օգնում եմ ընկերներիս:
- ○ Կատարում եմ ուսուցչի ասածը:

66. ա) Ճիշտ տեղերում արտագրիր հայ հայտնի մարդկանց ազգանունները:

Սարյան, Պետրոսյան, Աղայան, Թումանյան, Խաչատրյան, Համբարձումյան

Տիգրան Պետրոսյան

Հովհաննես _____

Վիկտոր _____

Ղազարոս _____

Գեղամ _____

Արամ _____

բ) Նրանցից 2–ը մանուկների համար հեքիաթներ են գրել. ընդգծիր նրանց անունները:

67. Կարդա՛ առածները:
Արտագրի՛ր 2–րդ առածը:

Ստի ոտքերը կարճ են:

Գյուղ կանգնի, գերան կկոտրի:

Ուշ լինի, նուշ լինի:

---

68. Կարդա՛ բանաստեղծությունը:
Արտագրի՛ր՝ ընդգծված բառերի փոխարեն գրել/փակցնելով համապատասխան թիվը (տե՛ս Հավելված 4):

Երեք թռչուն միացան,

Երամ կազմել ցանկացան:

Մեկը էսպես խոսեց, ասաց.

– Ես կթռչեմ ձեր առջևից,

Իսկ երկուսդ՝ իմ հետևից:



_____

_____

_____

_____

_____

69. Տրված բառերը արտագրիր համապատասխան սյունակներում:

երեխա, ֆուտբոլ, լավ, գնդակ, ջուր, կանգնել, դույլ, խաղացող, հանկարծ, գլորվել, փոս, լողալով, օգնել, նեղ, ընկեր, խաղ, խռոված, անհամբեր

Միավանկ	Երկվանկ	Եռավանկ
լավ	ֆուտբոլ	երեխա

70. ա) Կարդա՛ պատմությունը:

Երեխաները ֆուտբոլ էին խաղում: Նրանք Հրանտին չէին վերցրել, որովհետև նա այնքան էլ լավ չէր խաղում: Հրանտը նեղացած նայում էր խաղացողներին: Հանկարծ գնդակը գլորվեց և ընկավ մոտակա փոսը: Երեխաները փորձեցին հանել գնդակը փոսից, բայց չկարողացան: Հրանտը որոշեց օգնել ու ասաց.

– Ես գիտեմ, թե ինչպես կարող եք հանել գնդակը փոսից:

– Ինչպե՞ս,– անհամբեր հարցրին երեխաները:

– Պիտի դույլով ջուր լցնենք փոսի մեջ:

Հաջորդ պահին երեխաները սկսեցին դույլով ջուրը արագ–արագ լցնել փոսը: Գնդակը լողալով դուրս եկավ փոսից:

Բոլորն ուրախացան, որ խաղը կարող են շարունակել, որ իրենց ընկերը հնարամիտ է և օգնեց իրենց:

բ) Արտագրիր Հրանտի խոսքերը:

_____

_____

գ) Կարդա՛ նախադասությունները: Նշի՛ր՝ ո՞րը կդնես պատմության վերջում:

☐ 1. Հրանտը նեղացած հեռացավ խաղադաշտից:

☐ 2. Երեխաները առաջարկեցին, որ Հրանտը խաղա իրենց թիմում:

71. Կարդա՛ քո պարտականությունները: Նշի՛ր, թե դրանցից ո՞րն ես կատարում:

☐ 1. Ես ամեն օր շուտ եմ արթնանում:

☐ 2. Կարգի եմ բերում անկողինս:

☐ 3. Մարզանք եմ անում:

☐ 4. Լվացվում և սանրվում եմ:

☐ 5. Դասավորում եմ պայուսակս:

☐ 6. Ժամանակին հասնում եմ դպրոց:

☐ 7. Դասերին ուշադիր եմ լսում ուսուցչին:

72. ա) Կարդա՛ բանաստեղծությունը:

Ինչպես օրը ուրախ դարձնել

Վաղ արթնացի՛ր առավոտյան՝
Շողերի հետ արեգակի,
Շո՛ւտ հագնվիր ու լվացվիր՝
Սառույցի պես սառը ջրով,
Եվ մայրիկին դու մոտեցիր՝
Քո գեղեցիկ բառերով:

բ) Գրի՛ր այն բառերը, որոնք դու ասում ես մայրիկիդ:

_____

73. ա) Կարդա՛ պատմությունը:
Արտագրի՛ր հերոսների անունները:

Մանուկ Դավիթը Մսըրում էր: Նա ոչինչ չէր ուտում... Ձենով Օհանը Սասունից մեղր ու կարագ ուղարկեց Դավթին: Դավիթը Սասնա մեղրն ու կարագը կերավ և ուժեղացավ:

Մելիքը այս որ տեսավ, ասաց.

– Դավիթը որ մեծացավ, ես չեմ կարողանա Սասունը գրավել: Քանի Դավիթը դեռ փոքր է, Սասունը պիտի գրավեմ:

Մելիքը զորք հավաքեց, գնաց Սասունը գրավեց ու հետ եկավ Մսըր:

բ) Ընդգծի՛ր տեղանունները:

74. Կարդա՛ պատմությունը:
Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել ոսկոր բառը:
Գրի՛ր թիվը վանդակում:

Մի օր Մելիքը Դավթին փակեց մի մութ սենյակում, մի իմաստուն էլ նշանակեց, որ Դավթին հսկի:

Դավիթը մութ սենյակում երկար մնաց: Մի օր էլ ճաշը ուտելուց հետո մի ոսկոր ընկավ ատամի տակ: Նա տեսավ, որ ոսկորը չի ջարդվում, բարկացավ, շպրտեց մի կողմ: Ոսկորը կպավ պատուհանի ապակուն և ջարդեց այն:

75. Կարդա՛:
Արտագրի՛ր նախադասությունները՝ բառերը փոխարինելով համապատասխան հոմանիշներով:

(դժգոհեց, կորավ, բարկացավ, լուսամուտը)

1. Իմաստունը կտորով փակեց պատուհանը, շողն անհետացավ:
2. Մի օր էլ ճաշը ուտելուց հետո մի ոսկոր ընկավ ատամի տակ, տեսավ՝ չի ջարդվում, զայրացավ, շպրտեց մի կողմ:
3. Բա ես ինչո՞ւ եմ այստեղ նստած,– բողոքեց Դավիթը:

76. Շարունակի՛ր շարքը՝ ըստ օրինակի:

պարզ	պարզություն	ջերմ	ջերմություն
լավ		սովոր	
տաք		վատ	
խաղաղ		առողջ	

77. ա) Կարդա՛ պատմությունը:
Ընդգծի՛ր այն նախադասությունները, որոնցից իմանում ենք, թե ի՞նչ էր ուզում Տիգրանը:



Տիգրանն այնքան էր խաղացել հեռախոսով, որ արդեն ինքն էլ հայտնվեց հեռախոսի մեջ:

«Այս ի՞նչ պատահեց, էլ չեմ ուզում այս խաղերը խաղալ: Ուզում եմ դուրս գալ այս հեռախոսի միջից: Ուզում եմ գնալ տուն՝ ծնողներիս մոտ: Ուզում եմ ընկերներիս հետ խաղալ: Օգնեցե՛ք,– գոռում էր Տիգրանը:– Ուզում եմ սովորել, աշխատել, կատարել իմ բոլոր պարտականությունները: Ճիշտ է, ես սխալվել եմ, հիմա չեմ կարո՞ղ սխալս ուղղել:

– Գուցե կարող ես,– ասաց պատմվածքի հեղինակը,– եթե հիշես, թե սխալվելու մասին ինչ ես կարդացել մայրենիի գրքում:

Տիգրանը լարեց հիշողությունն ու ասաց.

– Հիշեցի՛: «Սխալվեցի՛ր, մի՛ վախեցի՛ր: Դասեր քաղի՛ր, առա՛ջ անցի՛ր»:

բ) Արտագրի՛ր Տիգրանի հիշած արտահայտությունը:

«_____

_____»

78. Տրված բառերը բաժանի՛ր վանկերի՝ ըստ օրինակի:

առաջին, ծիրան, կորիզ, մարդիկ, ծիրանենի, աշխարհ, ուշադրություն, Արարատ, Հայաստան, երկիր

79. Կարդա՛ պատմությունը:
Արտագրի՛ր 3 միավանկ բառ:

ԱՌԱՋԻՆ ԾԻՐԱՆԵՆԻՆ



Ծիրանի կորիզը ընկել էր սարի վրա: Ծիլ տվեց կորիզը և մեծացավ, դարձավ ծիրանենի: Մարդիկ տեսան, որ սարի վրա ձյան պատճառով ծիրանենին վնասվում է: Հաջորդ տարի նրանք ծիրանենին տնկեցին Արարատյան դաշտում:

Արարատյան դաշտում կորիզը ծիլ տվեց և մեծացավ, դարձավ ծիրանենի՝ համով–հոտով ծիրաններով:

Ծիրանենիներն այստեղ այնքան շատացան, որ Հայաստանն անվանեցին «Ծիրանի երկիր»:

_____ _____ _____

80. Պատասխանի՛ր հարցերին և գրի՛ր:

1. Ծիրանենին որտե՞ղ է աճում :

Ծիրանենին աճում է _____ : այգի

2. Կաղնին որտե՞ղ է աճում:

Կաղնին աճում է _____ : անտառ

3. Գազարը որտե՞ղ է աճում:

Գազարը աճում է _____ : բանջարանոց

4. Ցորենը որտեղ է աճում:

Ցորենը աճում է _____ : արտ

81. Կարդա՛ միջատների մասին հանելուկները, ընտրի՛ր և գրի՛ր պատասխան–բառերը:

սարդ

թիթեռ

մրջյուն

Ճանապարհին հերթով շարված,
Տեսա երկար մի քարավան,–
Աշխատում են առանց դադար
Պաշար դիզում ձմռան համար:

_____

Թևեր ունի գույնզգույն,
Ծիլ ու ծաղիկ է սիրում,
Նա ձեզ, ամենքիդ ճանաչ,
Թռիչքը՝ կարճ, կյանքը՝ կարճ:

_____

Առանց թելի ցանց է հյուսում
Եվ իր կերը ցանցով որսում:

_____

82. Շարունակի՛ր:

արծաթ *արծաթե* _____ քար _____

փայտ _____ մետաքս _____

83. Կարդա՛ բանաստեղծության հատվածը:
Նկարի՛ր/փակցրո՛ւ քո պատկերացրածը (տե՛ս Հավելված 5):

Նկարեցի մի սիրուն տուն,
Իսկ տան առաջ՝ այգի, պարտեզ:
Բա՛լ ես ուզում, խնձո՛ր, թե՞ տանձ,
Ինչ միրգ ուզես, քաղեմ, տամ քեզ:

84. ա) Կարդա՛ բանաստեղծության շարունակությունը:
Ընդգծի՛ր այն բառը, որը սկսվում և ավարտվում է ***ձայնավորով:***

Եվ հայրիկը, և՛ մայրիկը
Նկարս շատ հավանեցին:
Ես գունավոր մատիտներով
Պապիս գյուղը նկարեցի
Ու գեղեցիկ այդ նկարը
Ես «Հայրենիք» անվանեցի:

բ) Հարցին պատասխանի՛ր 1 բառով:

- Ինչպե՞ս անվանեց հեղինակը իր նկարը: _____

85. Կարդա՛ բառազույգերը: Ընդծի՛ր՝ ինչո՞վ են տարբերվում:

տուն – շուն

սար – լար

տանձ – գանձ

քեզ – մեզ

հայրիկ – մայրիկ

կանաչ – կակաչ

86. ա) Կարդա՛ բանաստեղծությունը:

Ծիտիկներն են երգում,
Երգ է շրշում հովը,
Առվակներն են երգում,
Երգ է ասում ծովը:

Երգ կա շուրթին քամու,
Երգ կա շուրթին առվի,
Եղնիկների վազքում,
Թռիչքներում արծվի:

բ) Քանի՞ անգամ տեսար **երգ** բառը, հաշվի՛ր:
Թիվը գրի՛ր վանդակում:

87. Ընդգծի՛ր բոլոր բառերում կրկնվող արմատը:

երգիչ, համերգ, երգահան, սիրերգ,
մեներգ, երգչուհի, երգեցիկ, զուգերգ

88. Համապատասխանեցրու դարձվածքները բառերի կամ բառակապակցությունների հետ՝ ըստ գույնի և կարդա՛:

բերանը ջուր առնել	**օգնել**
ականջը սրել	**լուռ մնալ**
լեզու գտնել	**համաձայնության գալ**
ձեռք մեկնել	**շատ ուրախանալ**
աշխարհով մեկ լինել	**անտանելի շոգ լինել**
կրակ թափվել	**ուշադիր լսել**

89. Կարդա՛ պատմությունը:



Ամառ էր, երկնքից կարծես **կրակ էր թափվում:** Հովիկը մայրիկի հետ սպասում էր ավտոբուսին: Կանգառում, շոգից թուլացած մի շուն էր պառկած:

Ամեն ինչից երևում էր, որ շունը տեր չուներ: Հովիկն ուշադիր շանն էր նայում. տեսնես ո՞ւմ շունն է, ինչո՞ւ է հեռացել տնից... Շունը զգաց Հովիկի հայացքը, և ինքն էլ սկսեց նայել Հովիկին:

բ) Գրի՛ր՝ տրված բառերից ո՞րն է **կրակ է թափվում** դարձվածքի բացատրությունը:

_____ **ցուրտ, շոգ**

գ) Ի՞նչ կհարցնեիր շանը, եթե դու լինեիր Հովիկի փոխարեն: Գրի՛ր:

_____

90. Ընդգծիր 4 վանկ ունեցող բառերը:

աշուն, պարահանդես, անտառ, չարաճճի, տերև, դեղին, սոսի, ծառ, կարմիր, զարթնել, պարել, նվագել, սրինգ, աշխարհ

91. Արտագրիր դարձվածքները՝ համապատասխանեցնելով բացատրություններին:

դժվար իրավիճակում հայտնվել, ամենամեծ բաժինը, անկուշտ, անկեղծ, շատ լավ իմանալ

աչքը ծակ	անկուշտ
առյուծի բաժին	
հինգ մատի պես իմանալ	
մաքուր սրտով	
կրակի մեջ ընկնել	

92. Լրացրու աղյուսակը:

Առարկան	Գույնը	Ձևը	Համը
	կարմիր	կլոր	քաղցր

93. Բառերն արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

անտառ, սրընթաց, քամի, ներխուժել, կատաղած, տապալել, պարծենալ, ջարդել, դիմանալ, հարված, կանգուն, շառաչել

երկվանկ բառեր	եռավանկ բառեր
անտառ	սրընթաց

94. Կարդա՛ բանաստեղծությունը:
Արտագրի՛ր քամու խոսքը:

Անտառն ու քամին

Անտառ ներխուժեց քամին սրընթաց,
Գետնին տապալեց ծառերը փտած
Եվ ինքն իր ուժով հպարտ պարծեցավ:
– Կջարդեմ բոլոր ծառերը մեկ–մեկ,
Թող չմտածի անտառը երբեք,
Որ կդիմանա իմ հարվածներին:
– Անմի՛տ,– անտառը հպարտ շառաչեց,–
Փտած ծառերն են լոկ քեզ զոհ գնում,
Կանաչ անտառը կանգուն է մնում:

95. Օգտվի՛ր գունային հուշումներից և վերականգնի՛ր առածները:
Արտագրի՛ր:

Մի խելքը լավ է, **ծափ չի տա:**
Մի ձեռքը **սարեր շուռ կտանք:**
Գյուղ կանգնի, **երկուսը՝ առավել:**
Ուս ուսի որ տանք, **գերան կկոտրի:**

_____

_____

_____

_____

96. ա) Կարդա՛ տեքստը:
Արտագրի՛ր **էպոս** բառն ունեցող նախադասությունները:

Էպոսը հունարեն բառ է, որը նշանակում է զրույց, պատմություն: Էպոսը ստեղծում է ժողովուրդը: Այն հերոսների մասին զրույցների միավորում է:

Մեր **էպոսը** կոչվում է «Սասնա ծռեր»: Գլխավոր հերոսներից են Առյուծ Մհերը, Սասունցի Դավիթը, Փոքր Մհերը: Առյուծ Մհերը Սասունցի Դավթի հայրն է: Փոքր Մհերը Սասունցի Դավթի որդին է:

_____

_____

_____

_____

բ) Ընդգծի՛ր տեղանունները:

Ո՞վ էր Սասունցի Դավթի որդին: _____

97. Առարկա ցույց տվող բառերից ստացիր գործողություն ցույց տվող բառեր՝ ըստ օրինակի:

առարկա ցույց տվող	***գործողություն ցույց տվող***
ջուր	ջրել
գործ	
աղաղակ	
մեխ	
կանչ	

98. Գործողություն ցույց տվող բառերից ստացիր առարկա ցույց տվող բառեր՝ ըստ օրինակի:

գործողություն ցույց տվող	***առարկա ցույց տվող***
ջրել	ջուր
գործել	
աղաղակել	
մեխել	
կանչել	

99. Տրված բառերում կանաչով ընդգծիր ***տերև*** արմատը:

տերևախիտ, տերևաթափ, տերևաշատ, տերևազուրկ, անտերև

100. Արտագրիր իմաստով մոտ բառերը ճիշտ տեղերում:

ժրաջան, գործ, ճախրել, շռայլորեն, ցնծալ, տաք

աշխատանք _____

աշխատասեր _____

ուրախանալ _____

առատորեն _____

ջերմ _____

թռչել _____

101. ա) Կարդա՛ պատմությունը:
Ընդգծի՛ր ***թրթուր*** բառը:



Տերևին նստած թրթուրը հետևում էր, թե ժրաջան միջատներն ինչպես են երգում, թռչում այս ու այն կողմ... Ամեն ինչ անընդհատ շարժման մեջ է: Եվ միայն թրթուրին է բնությունը զրկել ձայնից, վազելու և թռչելու կարողություններից: Նա միայն կարող էր տերևից տերև անցնել: Սակայն թրթուրը չէր դժգոհում իր բախտից և ոչ մեկին չէր նախանձում:

Հաշվի՛ր ընդգծված բառերը և գրի՛ր դրանց թիվը: ☐

բ) Պատասխանի՛ր հարցին՝ օգտվելով տեքստից:

Ի՞նչ կարող էր անել թրթուրը:

_____

102. ա) Շարունակի՛ր՝ ըստ օրինակի:

մետաքս Մետաքսյա

փայտ _____

արծաթ _____

երկաթ _____

բ) Բառերից մեկով կազմի՛ր նախադասություն:

_____

103. Արտագրիր իմաստով մոտ բառերը ճիշտ տեղերում:

խրճիթ, թափառել, ձանձրալի, գորշ

տնակ _____

անհետաքրքիր _____

մուգ _____

զբոսնել _____

104. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր ***խրճիթ*** բառը:

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ,
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ,
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում
Մի հին խրճիթում
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

բ) Հարցի պատասխանը գրի՛ր 1 բառով:

Որտեղ էր ապրում տղան իր մոր հետ: _____

105. Կարդա՛ բանաստեղծության վերջին հատվածը: Արտագրի՛ր խրճիթը նկարագրող հատվածը:

Ման եկա, մայրիկ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խրճիթն է, _____
Էս հին խրճիթն է, _____
Գետի եզերքին, _____
Ծառերի տակին: _____

106. Կատարիր գործողությունը, ստացիր բարդ բառ և գրիր:

դեղ	+	ա	+	գործ	=	դեղագործ
բարձր	+	ա	+	ձայն	=	_____
արև	+	ա	+	ծագ	=	_____
հյուր	+	ա	+	սրահ	=	_____
լավ	+	ա	+	տես	=	_____
անձև	+	ա	+	ջուր	=	_____
անուշ	+	ա	+	հոտ	=	_____

107. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրիր գույների անվանումներն իրենց գույներով:

Մի օր Արփենիկը գնաց դաշտ: Տեսավ գունավոր շա՛տ ծաղիկներ՝ դեղին, կապույտ, կարմիր, կանաչ:

Մոտեցավ, որ դեղին ծաղիկը պոկի: Հեռվից մի դեղին թիթեռ եկավ, իջավ ծաղկին, ասաց.

– Վա՛յ, վա՛յ, այդ ի՞նչ ես անում: Դեղին ծաղիկն իմ տնակն է: Եթե պոկես, ես որտե՞ղ ճաշ ուտեմ, ջուր խմեմ, երգեմ ամբողջ օրը:

– Լավ, թիթեռնի՛կ, ասաց Արփենիկը: Ես ծաղիկ չեմ պոկի, որ դու առանց տնակի չմնաս:

_____

_____

_____

_____

բ) Պատասխանի՛ր հարցերին:

Արփենիկը պոկե՞ց դեղին ծաղիկը: _____

Ինչո՞ւ Արփենիկը չպոկեց ծաղիկը:

_____

108. Տրված բառերը վանկային կորերով բաժանիր վանկերի:
Արտագրիր համապատասխան սյունակներում:

հայրիկ, դասարանցի, նշանավոր, աշխարհ, կատարել, ճանաչել, ժողովուրդ, մարդիկ, օրինակ, շախմատիստ, այսօր, չեմպիոն, մարմնամարզիկ

2 վանկ	*3 վանկ*	*4 վանկ*

109. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգծիր գրողների անունները:

Հայրիկ, մեր դասարանցի Գոռն ասում է, որ ինքը դառնալու է նշանավոր մարդ: Ի՞նչ է նշանակում նշանավոր մարդ,– մի օր հարցրեց Վահագնը:

– Նշանավոր են դառնում այն մարդիկ, որոնք մեծ գործեր են կատարում:

– Հայերի մեջ կա՞ն նշանավոր մարդիկ:

– Հայ ժողովուրդը շատ նշանավոր մարդիկ է ծնել: Օրինակ՝ շախմատիստ **Տիգրան Պետրոսյանը,** մարմնամարզիկ **Ալբերտ Ազարյանը,** աշխարհի չեմպիոն **Յուրի Վարդանյանը:**
Մենք ունենք նաև հռչակավոր արվեստագետներ՝ **Արամ Խաչատրյան, Գոհար Գասպարյան, Շառլ Ազնավուր, Մարտիրոս Սարյան,** գրողներ՝ **Հովհաննես Թումանյան, Վիլյամ Սարոյան:**

բ) Տեքստից լրացրու ազգանունները:

Տիգրան _____ Վիլյամ _____

Գոհար _____ Յուրի _____

Արամ _____ Շառլ _____

Հովհաննես _____ Ալբերտ _____

Մարտիրոս _____

110. Արտագրիր հատուկ անունները համապատասխան սյունակներում (Հիշիր՝ մարդկանց, քաղաքների, գյուղերի անունները գրվում են մեծատառով):

Մեսրոպ, Թումանյան, Սարոյան, Հովհաննես, Արտաշատ, Տիգրան, Հրազդան, Սևան, Համբարձումյան, Երևան, Վիկտոր, Աղայան

Անուն	Ազգանուն	Քաղաք

111. Կարդա՛ պատմությունը: Արտագրիր հայերի համար ամենանշանավոր մարդու անունը:

– Մենք շատ հին ժամանակներում ունեցել ենք նաև աշխարհին հայտնի թագավոր՝ Տիգրան Մեծ:

– Հայրիկ, Ես շատ եմ սիրում Մերսոպ Մաշտոցին: Նա էլ է նշանավոր:

– Այո՛, հայերիս համար ամենանշանավոր մարդկանցից է Մեսրոպ Մաշտոցը: Նա ստեղծել է մեր այբուբենը:

Հայ հայտնիներից է նաև աստղագետ Վիկտոր Համբարձումյանը:

_____

112. ա) Կարդա՛ պատմությունը:
Ընդգծի՛ր հայ հայտնիների անունները և ազգանունները:

Վիկտոր Համբարձումյանը դեռևս հինգ տարեկանում ազատ խոսում էր հայերեն և ռուսերեն, գրում էր և կարդում:

Երբ Վիկտոր Համբարձումյանը 8 տարեկան էր, նրան տանում են Հովհաննես Թումանյանի մոտ: Նրա հետ զրույցից հետո բանաստեղծն ասում է. «Նայելով այս տղային, ես կարող եմ հանգիստ լինել հայ ժողովրդի ապագայի համար»:

բ) Գրի՛ր հարցի պատասխանը:

Ո՞ւմ մոտ էին տարել Վիկտոր Համբարձումյանին:

_____

113. ա) Կարդա՛ պատմությունը:
Ընդգծի՛ր հատուկ անունները: Ասա՛ դրանք մեծատառո՞վ են գրվում, թե՞ փոքրատառով:

Վիկտոր Համբարձումյանը հիացրեց աշխարհին: Նա դարձավ նշանավոր աստղագետ: Ըստ նրա՝ աստղերը երկնքում ապրում են առանձին խմբերով:

Նա Արագած լեռան լանջին կառուցեց Բյուրականի աստղադիտարանը: Վիկտոր Համբարձումյանը բացահայտեց աստղերի մասին շատ ու շատ գաղտնիքներ: Վիկտոր Համբարձումյանը մեծ հայ էր և մեծ աստղագետ:

բ) Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտվելով տեքստից:

1. Վիկտոր _____ հիացրեց աշխարհին:
2. Նա _____ լեռան լանջին կառուցեց

_____աստղադիտարանը:

114. Արտագրի՛ր բառերը՝ ընդգծված տառերը գրելով կարմիրով:

արև, օգնել, տերև, անդադար, անընդհատ, օվկիանոս, միլիոն, անձրև, ձյուն, դեռևս, չեմպիոն, տնօրեն, անվերջ, աշխարհ, Երևան, Սևան

_____

_____

_____

115. Արտագրի՛ր բառերը համապատասխան տեղում:

անհանգիստ, հայրենասեր, անվախ, աստղագետ, ազգասեր

վախ չունեցող _____

հայրենիք սիրող _____

իր ազգը սիրող _____

հանգիստ չունեցող _____

աստղեր ուսումնասիրող _____

116. Կարդա՛ առածները: Արտագրի՛ր բոլոր առածներում կրկնվող բառը:

1. Ժամանակը ոսկի է:
2. Ժամանակը անգին գանձ է:
3. Ամեն բան իր ժամանակը ունի: _____

117. Կարդա՛ Հովհաննես Թումանյանի քառյակը:
Ընդգծի՛ր այն բառը, որը 2 անգամ է գործածվել:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նրան, որ իր գործով,
Կապրի անվերջ, անդադար:

118. Ընդգծիր գարնանը վերաբերող բառերը:

մանուկ, գարուն, հալոց, փողոց, ձմեռ, ժպիտ, ծաղիկ, աշխույժ, ծիլ, գեղեցիկ, թռչուն, թիթեռ, երգել, կարկաչել, աղջիկ, թռվռալ, կանաչել:

119. Կարդա՛ բանաստեղծության հատվածը:
Արտագրի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Երբ փողոցներում
Հալոցն ընկավ,
Ձմռան հետևից
Գարունը եկավ.
Մի փոքրիկ աղջիկ՝
Աշխույժ, թռվռան,
Ժպիտը դեմքին,
Մոտեցավ գարնան... _____

120. Բառազույգերում ընդգծի՛ր նույն արմատը:

<u>արև</u> – **<u>արև</u>**աածագ

ձյուն – **ձյուն**անուշ

երգ – երգահան

ծաղիկ – արևաածաղիկ

թեթև – թեթևամիտ

թև – նրբաթև

121. Նախադասություններում լրացրո՛ւ փակագծում տրված բառերը:

1) Գարունը հալեցնում է _____ (սարեր) ձյունը:

2) Գարնանը անուշ _____ (ծլվլալ) թռչունները:

3) Գարնանը գետերը արագ _____ (հոսել):

122. Գրի՛ր/փակցրու՛ հաջորդող տարվա եղանակը, ամիսը (տե՛ս Հավելված 6):

ձմեռ _____

ամառ _____

գարուն _____

աշուն _____





սեպտեմբեր _____

դեկտեմբեր _____

փետրվար _____

ապրիլ _____

հուլիս _____

123. Արտագրիր գարնանը վերաբերող նախադասությունները:

Ծառերը ծաղկում են:

Տերևները դեղնում են և թափվում:

Երեխաները ձնեմարդ են պատրաստում:

Թռչունները վերադառնում են:

Օրերը ցրտում են և կարճանում:

Հալվում է սարերի ձյունը:

_____

_____

_____

124. Նախադասությունների մեջ լրացրու բաց թողնված բառը:

Գարնանը երկնքում ուրախ ժպտում է _____:

Բացվում է գարնան առաջին ծաղիկը՝ _____:

Գարնանը հաջորդում է _____:

(մանուշակ, արեգակ, ամառ)

125. Արտագրիր **և** ունեցող բառերը:

երկինք, ծիածան, հատիկ, պարտեզ, սերմ, **արև,** ճառագայթ, բույս, անձրև, կեղև, տերև, արմատ, կյանք, բողբոջ

_____

126. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 3–րդ նախադասությունը:

Գարնան մի առավոտ արևն ասաց.

– Պարտեզում՝ հողի տակ, մի փոքրիկ բույս կա քնած, գնամ արթնացնեմ:

Եվ նա գնաց կանգնեց պարտեզի վերևում ու սկսեց ուժգին շողալ:

Հողը տաքացավ: Արևն իր ճառագայթներով հպվեց հատիկին ու կանչեց.

– Փոքրի՛կ բույս, սիրելի՛ս, դո՛ւրս արի:

_____

_____

127. Կարդա՛ պատմության շարունակությունը:
Արտագրի՛ր հարցի պատասխանը տեքստից:

Արևն ու անձրևը հերթով այցելում են փոքրիկ բույսին, և նա սկսում է աճել, գեղեցկանալ: Նրա բողբոջները տերևներ դարձան: Մի օր էլ նրա վրա գեղեցիկ ծաղիկ բացվեց:

– Ե՞րբ փոքրիկ բույսը սկսեց աճել, գեղեցկանալ: Գրի՛ր պատասխանը:

_____

128. Տրված բառերում ընդգծի՛ր **այ՝ին, ություն, ավոր, իկ, ան, դժ** ածանցները:

փոքրիկ, դժգույն, գունավոր, հատիկ, ջերմություն, արևային, գարնանային, անկուշտ, անծայր

129. Որոշիր և համապատասխան տեղում արտագրիր իմաստով մոտ բառը:

գեղեցիկ, շողալ, աշխույժ, պարտեզ, ջարդել, առողջանալ

զվարթ _____

սիրուն _____

փայլել _____

կոտրել _____

այգի _____

ապաքինվել _____

130. Կարդա՛ Հովհաննես Թումանյանի «Թռչունի մտածմունքը» բանաստեղծության առաջին և վերջին քառատողերը:
Ընդգծիր ***աշխարհ*** բառը:
Հաշվիր՝ քանի՞ անգամ է այն գործածվել:

ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ՝
Առատ ու անփույթ,
Աշխարհն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը՝ կապույտ:

Հիմա թռչում եմ հեռու, շատ հեռու,
Ամեն տեղ գնում,
Բայց թե աշխարհը ինչից է շինած,
Էլ չեմ հասկանում:

բ) Պատասխանիր մեկ բառով:

- Ինչից է ծնվում (դուրս գալիս) թռչունի ձագը:

_____

131. Որոշի՛ր և համապատասխան տեղում արտագրի՛ր իմաստով հակառակ բառը:

ներքև, կոկիկ, մեծ, կառուցել, մոտիկ

փոքրիկ _____

վերև _____

անփույթ _____

հեռու _____

շինել _____

132. Տրված բառերը վանկատի՛ր վանկային կորերով:

ամպիկ, մաքուր, երկինք, փոքրիկ, մոլորված, հոգնել, աղջիկ, կենդանաբանական, այգի, զգեստ, անձրևանոց, ճանապարհ

133 . ա) Կարդա՛ պատմվածքը:
Արտագրի՛ր/ընդգծի՛ր աղջկա խոսքը:

ԱՄՊԻԿԸ

Մաքուր երկնքում մի փոքրիկ Ամպիկ հայտնվեց: Ինքն էլ չգիտեր, թե ինչպես էր մնացել մենակ: Տխրեց, հոգնեց և որոշեց ցած իջնել: Եկավ ու կանգ առավ կենդանաբանական այգու վերևում: Այն է՝ պետք է իջներ, երբ լսվեց մի փոքրիկ աղջկա ձայն.

– Ամպի՛կ, Ամպի՛կ, խնդրում եմ չիջնես, նոր զգեստ եմ հագել, իսկ անձրևանոց չունեմ...

Ամպիկը խղճաց աղջկան և շարունակեց իր ճանապարհը...

_____

_____

բ) Պատասխանը արտագրի՛ր տեքստից:

– Ի՞նչ արեց Ամպիկը:

_____

134. Արտագրիր բառերը համապատասխան սյունակներում:
Ընդգծիր **ան, իկ, ենի, ոտ** ածանցները:

պարզ բառեր	**ածանցավոր բառեր**
ձայն	անձայր

135. Ինչպիսին ես դու. արտագրիր քեզ բնութագրող բառերը:

ուժեղ, դիմացկուն, բարի, հոգատար, ընկերասեր, շնորհակալ

Ես _____ եմ:

Ես _____ եմ:

Ես _____ եմ:

Ես _____ եմ:

Ես _____ եմ:

136. Արտագրիր **օգտակար** սովորությունների անվանումները:

սպորտով զբաղվելը, թխվածք ուտելը, ձեռքերը լվանալը, երկար քնելը, սենյակը օդափոխելը, միրգ ուտելը, դասից ուշանալը

_____

_____

_____

_____

_____

137. Տրված բառերից արտագրիր ***ե*** տառով սկսվող բառերը:

երկու, դեմք, ընկեր, երեք, պատուհան, կին, երեխա, լեզու, երգ, գիրք, ծերունի, երկիր, աշխարհ, ելակ

_____

_____

138. ա) Կարդա՛ պատմությունը:

Երկու երեխա խաղում էին բակում և փորձում հնարել մի լեզու, որը միայն իրենք կհասկանային:

– Բրիֆ, բրաֆ,– ասաց երեխաներից մեկը:

– Բրաֆ, բրուֆ,– պատասխանեց մյուսը:

Եվ նրանք սկսեցին բարձր ծիծաղել:

– Ինչ հիմար են այս երեխաները,– ասաց մի կին:

– Ես այդպես չեմ կարծում,– ասաց բարի ծերունին:– Ես ամեն ինչ հասկացա: Առաջինն ասաց. «Ինչ լավ օր է այսօր», իսկ մյուսը պատասխանեց. «Վաղն ավելի լավ օր է լինելու»:

բ) Պատասխանիր հարցին 1 բառով և գրիր:

Քանի՞ երեխա էր խաղում բակում:

_____

139. Պատկերների դիմաց գրիր/փակցրու՛ համապատասխան բառերը (տե՛ս Հավելված 7):

_____

_____

_____

_____

_____

_____

140. Արտագրիր նույն ածանցն ունեցող բառերը համապատասխան սյուներում:

Արամիկ, առվակ, առավոտյան, երեկոյան, հավիկ, ճուտիկ, գնդակ

իկ	ակ	յան
Հրամիկ	առվակ	առավոտյան

141. Ճիշտ տեղերում արտագրիր բառերը:

Մռնչալ, կռկռալ, հաչալ, ոռնալ, մլավել, մայել

Առյուծը _____ է:

Գայլը _____ է:

Կատուն _____ է:

Գառը _____ է:

Գորտը _____ է:

Շունը _____ է:

142. Նշիր, թե որ արտահայտություններն ես դու կիրառում ամեն օր:

– Բարի լույս: ☐

– Խնդրում եմ ... ☐

– Թույլ կտամ՞ օգնել: ☐

– Շնորհակալություն: ☐

– Հաջողություն: ☐

– Ներեցե՛ք: ☐

– Կարելի՞ է վերցնել ... ☐

143. Տրված բառերից արտագրիր ***ինչպիսի՞*** հարցին պատասխանող բառերը:

տղա, հայելի, շապիկ, պատռված, ձեռք, կարմրած, մազ, երկար, կեղտոտ, լալկան

Ինչպիսի՞ պատռված

Ինչպիսի՞ _____

Ինչպիսի՞ _____

Ինչպիսի՞ _____

Ինչպիսի՞ _____

144. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրիր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Հենց հայելու մեջ ես նայում եմ ինձ,
Ուրիշ տղա է նայում այնտեղից՝
Մազերը ցրիվ, երկար, գզգզված,
Ձեռքերն անլվա, շապիկը պատռած,
Կարմրած աչքեր ու կեղտոտ երես.
Ո՞վ է այդ տղան, չեմ ճանաչում ես... _____

145. ա) Կարդա՛ բանաստեղծության հաջորդ հատվածը:
Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ ես կարդացել ***հայելի*** բառը:

Իսկ հապա ինչո՞ւ այդ նույն հայելին
Սիրում է իմ մեծ եղբայր Կարենին:
Հենց կանգնում է նա դեմը հայելու,
Ամեն ինչ ուղիղ, ճիշտ է երևում՝
Շորերը կարգին, մազերը սանրած,
Ձեռք ու երեսը մաքուր լվացած:

բ) Գրի՛ր թիվը: ☐

146. Արտագրիր տղային և Կարենին բնութագրող բառերը առանձին սյունակներում:

խնամված, կարգապահ, անլվա, հոգատար, խելոք, կեղտոտ, մաքրասեր, գզգզված

Կարեն	Տղա

147. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրիր կենդանիների անվանումները:

Կենդանիներն ու բույսերը վիճում էին:

– Էլ չեմ ուզում, որ ինձ համարեն խորամանկ, սուտասան,– ասում էր աղվեսը:

– Ես էլ չեմ ուզում, որ ինձ անվանեն ագահ ու չար,– նեղվում էր գայլը:

– Ինձ անվանում են գոռոզ ու ինքնահավան, բայց ես այդպիսին չեմ,– ասում է առյուծը:

Բուն լսեց բոլորին ու ասաց.

– Մենք կարևոր գործ ենք անում. բոլորին օգնում ենք տարբերելու լավն ու վատը, չարն ու բարին:

– Առակը խրատում է,– զրույցն ավարտեց կաղնին:

_____

բ) Պատասխանիր հարցերին 1 բառով՝ օգտվելով տեքստից:

1. Ո՞ր կենդանուն են համարում սուտասան և խորամանկ:

_____

2. Առակը ի՞նչ է անում: _____

148. ա) Կարդա՛ առակը: Ընդգծի՛ր աղվեսի խոսքը:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Աղվեսը տեսավ խաղողի վազը և ցանկացավ ուտել, բայց դունչը չհասավ խաղողին:

Հեռանալով ինքն իրեն ասաց. «Դեռ խակ է»:

Այդպես էլ որոշ մարդիկ, երբ չեն կարողանում հաջողության հասնել, մեղքը գցում են պայմանների վրա:

բ) Պատասխանի՛ր 1 բառով:

- Աղվեսը կերա՞վ խաղողը: _____

149. Բառաշարքից դո՛ւրս գրիր ***ռ*** - ով վերջացող բառերը:

ամառ, ճպուռ, երգել, մրջյուն, ճռճռալ, ձմեռ, սպիտակ, գորգ, լայն, թևեր, դաշտ, պայծառ, ցրտաշունչ, լուռումունջ

_____

150. ա) Կարդա՛ «Ճպուռն ու մրջյունը» ստեղծագործության համառոտ տարբերակը: Ընդգծի՛ր մրջյունի խոսքերը կանաչ գույնով:

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռի–վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ
Երգեց, ճռռաց, ճռճռաց:
Մին էլ ըհը ձմեռը,
Փռեց իր լայն թևերը,
Բացեց գորգը սպիտակ
Դաշտերն առավ ձյունի տակ:

Եկան օրեր ցրտաշունչ
Ճպուռն ընկավ լուռումունջ.
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
Զընգր–զընգր դողալով,
Ծանր–ծանր սողալով՝
Նա մրջյունին ասում էր.

– Կերակրի՛ր, տաքացրո՛ւ,
Մինչև գարուն ապրեցրո՛ւ:
– Զարմանում եմ, ջանիկս,
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա՛, ի՞նչն էր պատճառը:

– Էն խոտերում բուրավետ,
Երգում էինք մերոնց հետ:
– Երգո՞ւմ էիր, շատ բարի,
Այժմ էլ բռնի վերվերի,
Քամին ծափ տա, դու պարի:

բ) Նշի՛ր այն ասացվածքը, որը համապատասխանում է ստեղծագործությանը:

1. Այսօրվա գործը վաղվան չեն թողնի: ☐
2. Ով աշխատի, նա կուտի: ☐

151. Տրված բառաշարքում ընդգծի՛ր միավանկ բառերը:

գարուն, մայր, սագ, ձագ, զբոսանք, աշխարհ, կանաչ, խոտ, երջանիկ, ամպ, անձրև, խոշոր, մութ, կաթիլ

152. Կարդա՛ պատմությունը և գրի՛ր հարցի պատասխանը տեքստից:

Գարնան մի օր մայր սագն իր փոքրիկ ձագերին տարավ զբոսանքի: Նա առաջին անգամ էր ձագերին ցույց տալիս մեծ աշխարհը: Մայր սագը սկսեց ձագերին սովորեցնել ուտել կանաչ խոտ: Ձագերը երջանիկ էին:

Նրանք մոռացան մայրիկի մասին և սկսեցին ցրվել: Մայր սագը սկսեց կանչել ձագերին, բայց նրանք չէին լսում: Շուտով կուտակվեցին մութ ամպերը, և թափվեցին անձրևի խոշոր կաթիլները: Այդ ժամանակ նրանք հիշեցին մայրիկին: Ա՜խ որքան էր հարկավոր մայրիկը:

– Ե՞րբ ձագերը հիշեցին իրենց մայրիկին:

_____

153. Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր՝ ըստ օրինակի:

հատկանիշ ցույց տվող	առարկա ցույց տվող
պայծառ	աշխարհ
մեծ	ամպեր
դեղին	ծաղեր
կանաչ	կաթիլներ
մութ	խոտ
խոշոր	արեգակ

պայծառ արեգակ

154. Արտագրի՛ր համապատասխան գոյնի բառը և կարդա՝ ինչ են ասում նշված խմբերին:

երամ, հոտ, նախիր, պարս, վտառ, երամակ

ձկների խումբ վտառ

թռչունների խումբ

մեղուների խումբ

ոչխարների խումբ

կովերի խումբ

ձիերի խումբ

155. Արտագրիր բարեմաղթանքը բացիկի մեջ՝ կետերի փոխարեն ավելացնելով անունները:

Սիրելի՛ ..... , շնորհավորում եմ քեզ ծննդյանդ օրվա առիթով:
Ցանկանում եմ, որ քո աչքերը միշտ ժպտան:

Քեզ շատ սիրող՝ .....

156. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը:
Ընդգծի՛ր գետակին բնութագրող բառերը:

– Ո՞ւր ես վազում
Այդպես արագ,
Ա՜յ դու կայտառ,
Սիրուն գետակ.
Կանգ առ, խաղանք
Այս ծառի տակ:

Չէ՛, փոքրիկս,
Գնամ պիտի.
Տես, ջաղացը
Գյուղի մոտի,
Պետք է ուժ տամ,
Որ պտտի:

բ) Արտագրիր հարցերի պատասխանը:

– Ինչ էր ուզում փոքրիկ տղան գետակից:

_____

_____

– Ինչու չկանգնեց գետակը:

_____

_____

157. Պատասխանիր փակագծում տրված հարցերին՝ ճիշտ տեղում արտագրելով բառերը:

թռչում են, կռվում է, հաչում է, փչում է, խաղում են

Շունը (ինչ է անում) _____:

Քամին (ինչ է անում) _____:

Երեխաները (ինչ են անում) _____:

Ագռավը (ինչ է անում) _____:

Թռչունները (ինչ են անում) _____:

158. Գրիր/փակցրու՛ համապատասխան կետադրական նշանները (տես Հավելված 8):

հարցական նշան _____

ստորակետ _____

վերջակետ _____

բացականչական նշան _____

շեշտ _____

159. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր բոլոր թիվ ցույց բառերը:

Փետրվարի **տասնինը** Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է: Այդ օրը նաև գրքի տոնն է Հայաստանում: Այդ օրը մարդիկ գրքեր են նվիրում միմյանց:

Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանում կային հազարավոր գրքեր: Դրանք նա ոչ միայն կարդացել էր, այլև դասավորել էր տասներկու պահարանում:

բ) Հարցի պատասխանը գտի՛ր տեքստից և գրի՛ր:

– Ե՞րբ է ծնվել Հովհաննես Թումանյանը:

_____

160. Կարդա՛ բանաստեղծության հատվածը:
Փակագծում տրված բառերից ո՞րը չկա տեքստում: Ընդգծի՛ր այդ բառը:

(**խնձոր, տանձ, գիրք**)

Ինչ–որ մեկը ծառ է տնկել,
Որ խնձորն այս հիմա ուտես:
Ինչ–որ մեկը տուն է սարքել,
Որ քո տունն է հիմա դարձել:
Ինչ–որ մեկը գիրք է գրել,
Ինչ–որ մեկը՝ երգ հորինել,
Ճամփա բացել,
Կամուրջ կապել,
Որ դու անցնես,
Կարդաս, երգես:

161. ա) Կարդա՛ բանաստեղծության հատվածը:
Փակագծում տրված բառերից որի՞ն դու հանդիպեցի՛ր: Ընդգծի՛ր այդ բառը:

(**խնձոր, տանձ, գիրք**)

Դու քո ճամփան անցի՛ր այնպես,
Որ օգտակար մի բան անես,
Ի՛նքդ էլ, ին՛քդ էլ մի ծառ տնկես,
Հողը ջրես, կամուրջ կապես...
Որ հեռավոր ինչ–որ մի օր
Մեկն էլ ինձ պես
Բարի խոսքով հիշի միշտ քեզ:

բ) Բանաստեղծության մեջ նշվածներից ո՞ր օգտակար գործողություններն ես կատարում: Արտագրի՛ր այդ տողերը:

_____

_____

_____

162. ա) Կարդա՛ տեքստը:
Ընդգծի՛ր ***Արամ Խաչատրյան*** անունը և ազգանունը:

Քեզ արդեն ծանոթ է հայ նշանավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը:

Արամ Խաչատրյանը շատ էր սիրում շներին: Մի անգամ նրան շնիկ են նվիրում: Շնիկին նա կոչում է Լյադո: Երբ շնիկը հիվանդանում է, Արամ Խաչատրյանը գրում է «Լյադոն լուրջ հիվանդացել է» պիեսը:

Պատմում են նաև, որ վեց տարեկանում հայրիկը նրան ուլիկ է նվիրել: Արամը շատ էր սիրում այդ ուլիկին:

բ) Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ է կրկնվել ազգանունը: Գրի՛ր թվերը: ☐

գ) Ինչ կենդանիներ էին նվիրել Արամ Խաչատրյանին:

1. _____

2. _____

163. Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր մեծատառով գրվող անունները:

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է: Այն հիմնել է Արգիշտի թագավորը:

Երևանի միջով հոսում են Գետառ և Հրազդան գետերը: Կենտրոնում է գտնվում Հանրապետության հրապարակը: Ես սիրում եմ Երևանը:

164. ա) Կարդա՛ բառակապակցությունները: Գտի՛ր դրանք տեքստում և ընդգծի՛ր:

փոքրիկ երեխաներ, պտղատու ծառեր, քաղցր տանձ,
հյութալի խնձոր, մատղաշ ճյուղեր

Երեխաները բարձրանում են պտղատու ծառերը: Քաղցր տանձ ու հյութալի խնձոր քաղում, ուտում, մատղաշ ճյուղերը ջարդում, թափում գետնին:

– Մեր ծառը չէ, անտեր է,– ասում են ու վազելով շարունակում իրենց ճանապարհը:

բ) Արտագրի՛ր տեքստում բացակայող բառակապակցությունը:

_____

165. Տրված բառերից արտագրի՛ր երկու վանկ ունեցող բառերը:

ճյուղ, թևեր, տերև, հով, զով, օդ, կիզիչ, տոթ, կանաչ, ամառ

_____

166. Կարդա՛ «Ծառի խնդրանքը» բանաստեղծությունը:
Արտագրի՛ր այն քառատողը, որից իմացար, թե ինչ օգուտ է տալիս ծառը:

ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Մի՛ կոտրատեք իմ ճյուղերը՝
Իմ մատներն ու իմ թևերը,
Տերև անգամ մի՛ պոկոտեք,
Որ ինձ խոր ցավ չպատճառեք...
Թողեք սփռեմ ես հով ու զով,
Կեղտ ու փոշուց մաքրեմ օդը,
Կանա՛չ, կանա՛չ իմ ձեռքերով
Ցրեմ ամռան կիզիչ տոթը:



_____

_____

_____

_____

167. Գրի՛ր, թե որ արմատից են կազմվել տրված բառերը:

մայրիկ, մայրենի, մայրական, մայրաբար, մայրություն

Մայր

դասացուցակ, դասընկեր, դասամիջոց, դասարան

_____

հացման, հացավաճառ, հացաբույս, հացթուխ

_____

168. Գրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:

երգիչ, հողագործ, հողամաս, երգարան, հողոտ, հողային, երգչուհի, հողագունդ, երգահան, երգեցիկ

***երգ* արմատով բառեր**	***հող* արմատով բառեր**
երգիչ	հողագործ

169. ա) Կարդա՛ բանաստեղծությունը:
Ընդգծի՛ր ի՞նչ հարցին պատասխանող առնվազն 5 բառ:

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս տունը, ուր ապրում ես դու,
Այս շորը, որ հագնում ես դու,
Այս գրիչը, որ գրում ես դու,
Այս թուղթը, որ նկարում ես,
Այս ծաղիկը, խաղալիքը,
Այս սրիչը, այս սրբիչը,
Այս լայն բակը, այս գնդակը,
Այս պարտեզն ու այս ծառերը,
Տաշած, նախշուն այս քարերը,
Այս խնձորը, այս մուրաբան...
Քեզ գրավող ամեն լավ բան
Երկնքից չեն պատրաստ ընկել,
Հավատա, իմ փոքրիկ ընկեր,
Ձեռք են բերվել դրանք ջանքով,
Ստեղծագործ աշխատանքով:
Սիրի՛ր համառ աշխատանքը,
Նա՛ է, գիտցի՛ր, մարդու համար
Ամենից լավ զարդարանքը:

բ) Արտագրի՛ր վերջին 3 տողը:
Քառակուսու մեջ գրի՛ր՝ քանի անգամ է գործածվել շեշտը (՛):

_____

_____

_____

170. Գրի՛ր հարցերի պատասխանները փակագծում տրված բառերով:

(**թռչել, սողալ, լողալ, ցատկոտել, մայել**)

Ինչ է անում արծիվը: թռչում է

Ինչ է անում ձուկը: _____

Ինչ է անում օձը: _____

Ինչ է անում գառնուկը: _____

Ինչ է անում նապաստակը: _____

171. Արտագրի՛ր նախադասությունները՝ լրացնելով բաց թողնված բառերը:

Գնդակը խաղալիք է, իսկ արծիվը՝ _____:

Թեյնիկը սպասք է, իսկ կաղնին՝ _____:

Զատիկը միջատ է, իսկ շունը՝ _____:

Վերարկուն հագուստ է, իսկ իշխանը՝ _____:

Վարունգը բանջարեղեն է, իսկ խաղողը՝ _____:

(**ձուկ, կենդանի, ծառ, թռչուն, միրգ**)

172. ա) Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր տեղանունների առաջին տառերը:

Հայաստանում գարունը սկսվում է Արարատյան դաշտում: Այնտեղ է բացվում առաջին ծաղիկը: Ծառերը հագնում են սպիտակ, վարդագույն զգեստներ:

Գեղեցիկ է նաև ամառը Արարատյան դաշտի գյուղերում: Էլ

դեղձենիներ, էլ ծիրանիներ, էլ խաղողի թփեր, ինչեր ասես, որ չկան Արարատյան դաշտում:

բ) Տարվա ո՞ր եղանակների մասին կարդացիր: Գրի՛ր դրանք:

_____

173. Լրացրո՛ւ աղյուսակը՝ ըստ օրինակի:

առարկա	*գործողություն*
ծաղիկ	ծաղկել
ամպ	
	անձրևել
աղմուկ	
	ձյունել

174. ա) Կարդա՛ բանաստեղծությունը: Արտագրի՛ր աշնան մրգերի անվանումները:

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Թե գարուն է նախշուն,
Նա ինչե՞ր է մեզ բաշխում.
– Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ.
Ալ ու ալվան վարդ շաղոտ:



_____
_____
_____
_____

Թե աշուն է պտղաբեր,
Ի՞նչ է բերում մեզ նվեր.
Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր
Դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ամառ է, շոգ ամառ,
Ինչ է բերում մեզ համար.
– Ցորեն, գարի ու հաճար՝
Ամեն հոգսի դեղ ու ճար:

Թե ձմեռ է ցրտաշունչ,
Ինչ է թափում լուռումունջ,
–Փաթիլ–փաթիլ փափուկ ձյուն՝
Արծաթի պես պսպղուն:

բ) Նկարիր քո սիրելի տարվա եղանակը:

175. Կարդա՛: Արտագրիր պատմության վերջաբանը:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԿԱՏՈՒՆ

Փոքրիկ Աշխենը շատ էր սիրում իր կատվին: Նրանից չէր բաժանվում: Ամռանը Աշխենի ծնողները պատրաստվում էին իրենց ավտոմեքենայով ծովափ գնալ: Աշխենը հայրիկին խնդրեց, որ կատվին էլ վերցնեն: Հայրիկը չհամաձայնեց: Այդպես ճանապարհ ընկան: Հասան ծովափ: Հայրիկը բացեց մեքենայի ետնամասը՝ իրերը հանելու:

Հանկարծ տեսնելով այնտեղ կուչ եկած կատվին՝ զարմանքից շփոթվեց: Աշխենն ու մայրիկը ուրախ ծիծաղեցին:

_____

_____

176. ա) Կարդա՛: Տրված նախադասություններից ընտրի՛ր և գրի՛ր պատմության շարունակությունը:

ԻՆՉՈ՞Ւ ՏԽՐԵՑԻ

Գարնանային գեղեցիկ օր էր: Իր կանաչ զգեստն էր հագել մանկական զբոսայգին: Այստեղ և՛ ծաղիկներն են շատ և՛ թռչունները:

Մայրիկիս և քույրիկիս հետ զբոսնում էի զբոսայգում: Երկու տղա կանաչը տրորելով մոտեցան կարուսելին: Նրանցից մեկը պաղպաղակ էր ուտում, մյուսը՝ կոնֆետ: Կերան, թղթերը ճմռթեցին ու նետեցին կանաչների մեջ: Մի աղջիկ էլ զբոսայգու ծաղիկները պոկում ու ծաղկեփունջ էր կապում: _____

_____

1. Նայեցի նրանց ու շատ ուրախացա:
2. Նայեցի նրանց ու շատ տխրեցի:

բ) Արտագրի՛ր պատմության նախաբանը:

_____

_____

_____

177. ա) Կարդա՛ տեքստը: Կանաչով ընդգծի՛ր այն հատվածը, որտեղից իմանում ես, թե ծառի տված գերաններից ու տախտակներից ինչ են պատրաստում:

ԾԱՌԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեր տված փայտից կրակ են անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, փափուկ հաց թխում: Բայց մեզ չեն հիշում, չեն պահպանում, այլ մեզ փչացնում, ոչնչացնում են:

Մեր գերաններից շինում են տներ, մեր տախտակներից՝ հատակ, սեղան, աթոռ, պահարան, դուռ, նստարան ու պատուհան: Բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում:

Ո՞վ չի կերել տանձ կամ կարմիր խնձոր, նուռ ու սալոր, դեղձ կարմրաթշիկ, ծիրան անուշիկ... Եվ այդ ամենը մարդիկ են ուտում: Բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում:

Խելո՛ք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ մարդիկ դառնաք, մեզ խնայե՛ք: Դուք մեզ պահպանե՛ք: Ձեր այգիներում նոր ծառե՛ր տնկեք...

բ) Արտագրի՛ր վերջաբանը:
Հաշվի՛ր՝ քանի՞ շեշտ (՛) կա վերջաբանում: Գրի՛ր թիվը:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Հնահիր | Դավիթ | Բարկեն

Գայանե | Զավեն | Ժիրայր

Հավելված 2

7. Դեկտեմբերի 20-ը 2026թ.

2. Քեզ շա~տ-շա~տ եմ կարոտել:

4. Հնհամբեր սպասում եմ քո գալուն:

3. Մենք արդեն տոնաճառը պարդարել ենք:

5. Շուտ արի, որ գնանք Հմանորի հանդեսին:

1. Բարև, տատի՛կ ջան:

6. Քո թոռնիկ՝ Հնահիր:

Հավելված 3

փոքր է | մեծ է | հասպ է | բարակ է

յածր է | բարձր է | երկար է | կարճ է

Հավելված 4

Հավելված 5









Հավելված 6

գարուն ամառ աշուն ձմեռ

հունվար մարտ մայիս

օգոստոս հոկտեմբեր

Հավելված 7

գնդակ ծուղրիկ հավ շուն ժաղիկ աղցիկ

Հավելված 8



Միքայելյան Ա. Վ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.

ՄԱՅՐԵՆԻ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ–ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 200:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ. Մալյան 43